

«Շարժըըը չէ՛հրկնաէ՛ երատ պոլսըրու-
լան՝ նուլթղուն՝ եւրի ինթիխապա տայիր
մուհարըրլաթտա արանմալը , Մէգքիւր
նուլթղուն թալըը , բուհու վէ սէօղլէրի
քիմ՝ տօղունմատը , Սհվալը մաղիյէ
ճիհլթիին՝ պու կէօնա պիր աթֆը նաղար
իտիրմէտէն հա՛նըը վաղթըր անլամալը ,
ճումհուրիյէթ հէնկրամըրը . բէյիպի-
լին պիտայլթիին՝ . Ֆրանսայը հիւքիւ-
մլթիսիլլիք պլիլիյսինտէն խէլաս ի-
տուպ , բաբանըն տիւնեվի հիւքիւմէ-
թիին թէ՛ճոտի , մլմալիքի սէրպէսթի-
յէթ իւղըէ թէ՛լալլիւմէլ թէ՛ճհըր , օրա-
մը սէրպիւթթ միւլթիմէլտոտիւր վէ քրիւ-
թիւննա պիր մլմալիքին ահվալլէն աա-
հիպ իլլէմէք նիլթի իլէ պիրլէնն ռի-
լամթարաֆտարանը . վաղթըր՝ մը ան-

մշականքներէ, պապութիւնը սիրող հոգի-
մշականքներուն համար գործածական բառ
մ'եղած է :

Մէծնաւ կրտէ թէ հոգիմշականք երբէք
պապական չեն . այդ , հոգիմշականք ընդ-
հանրապէս պապական չեն , բայց կայ հոգի-
մշականքներուն մէջ պապական այսինքն Պա-
պին գերազանցութեան կողմնակից մաս մը ,
որոնց Մէծնաւ ինքը հոգիմշականք ըլլա-
լէ դադարած չեն կրտէ , եւ Ս . Պապն ալ
զանոնք կործնէ եւ հակառակորդներն կանխ-
ծէ : Ուստի աւելորդ բան մ'է ըսել թէ հը-
ռովմշականք երբէք պապական կամ բա-
րիւթ չեն , մինչդեռ Պապին գերազանցու-
թեան կողմնակիցները , որոց բարիքն անուրը
կուտան , Ս . Պապին օրհնեալներն են :

Գանք մեր Հայ հոգիմշականքներուն , (այս
անունը տանք հիմա) . անուննիս մէկ , պատ-
մութիւննիս մէկ , հայրենիքնիս մէկ , լեզու-
նիս մէկ , գիրերնիս մէկ , ծէս եւ արարո-
ղութիւննիս մեծ մասամբ մէկ , Քրիստոսնիս
մէկ , առաքելնիս մէկ , Լուսաւորչնիս մէկ ,
վերջապէս ամեն մասամբ մէկ , բայց ինչ
է տարբերութիւննիս — իմ քահանայապե-
տըս սխալական Գեորգ Իր , քու քահա-
նայապետը անսխալ Պիոս Թ . րդ մը : Մեք
կրտէմք որ մեր քահանայապետը համահա-
ւասար է Հռովմի քահանայապետին , դուք
կրտէք որ Հռովմի քահանայապետը գերա-
զա՛ն եւ մեր կաթողիկոսը անոր ստորակարգ-
եալ մէկ խորհրդակցութեամբ կամ կաթողիկոսն է .
— արդ եթէ բացորոշապէս իրարմէ ունե-
ցած տարբերութիւննիս Պապին գերազա-
նութիւնն ու հաւատարմութիւնն է , ինչ ա-
նուն տալ կը վայել աւելի այս երկու բա-
ժանմունքը հակակցելու համար , — եթէ քա-
թողիկոսն էր ըլլար , վասն զի քաթողիկոսը
բառին հայերէնը կաթողիկէ է եւ ան մեզ
սահմանած ենք մեք , ինչպէս որ դուք ալ
ծեղ , եւ ամեն օր թէ դուք թէ մեք մեր Ս .
Պատարագին մէջ կրտէք իւրեք իւրեք եւ

— Կաթողիկոսն է , հոգիմշական կամ լատինա-
կան կոչները դարձեալ յարմար բան մը ըսած
չենք ըլլար , վասն զի ծէսներն ու արա-
րողութիւններնիւ լատինական կամ հոգի-
մշական չէ , այլ հայկական , բաց 'ի ականից
ծեր մէջ միթէ երկու կուսակցութիւնն չկա՞ն ,
լատինականն եւ հայութիւնը պահելու մա-
սին , եւ եթէ օր մը ելլանք մեր հայրերուն
լեզուով , ֆրանկացեալ կամ լատինացեալ
հայ կոչենք զանք , ճշմարտութենէ չեղած
ըլլանէս զատ , ձեր լուսաւորեալ եւ աղ-
գութիւնը սիրող մասին սիրող ծանր կեր-
պով վիրաւորած չ'ըլլաիք ըլլանք . իսկ եթէ
հոգիմշական կոչելու ըլլանք , միթէ ձեր խմ-
բակին բաժանման անունը սուսած կրտէք
ըլլալ , դուք Հռովմայեցի՞ եք , որ հոգիմշ-
ական եղած ըլլաք , եւ միթէ դուք մեզնէ
հոգիմշականութեան համար բաժնուեցաք
թէ Պապին գերազանցութեան կողմնակցու-
թեանը համար՝ բայց այս ալ ձգենք — դուք
չեք ընդունիր , որ նոր եկեղեցի կամ բաժա-
նում մ'եղած ըլլաք , այլ ինքզինքնիդ բուն
Լուսաւորչին յարողը , եւ մեզ Լուսաւոր-
չին չաղէն հեռացած կրտէք . լաւ . ձեզ
ծեր ընդունեալն համարմատ ենք աղբիւրը պահ
մը , եւ ըսենք որ դուք բուն Լուսաւորչին
յաջորդն էք եւ անոր հարազատ զուակը . իսկ
մեք անհարազատ . եւ բաւական յատակ եր-
թալով ու Լուսաւորչին անմիջական յաջոր-
դն ալ , ձեր կամ մեր պաշտպանած դա-
տին կողմնակից ըմբռնելով՝ միասնաբար միայն
Լուսաւորչի վրայ . կրտէք անսխալաւ Ս .
հաթանիդդ մէջ մեր աղային եկեղեցոյն
համար տեղ մը գոնէ հոգիմշական հայեր , եւ
կաթողիկոսական Հայաստաննայց եկեղեցի
բառը գտնել . — ես տեսած չունիմ , եթէ
Մէծնաւ կրտէ ցուցնել ատանկ բան մը ,
այն ատեն կ'սկսենք խորհիլ եւ ոչ միայն
կ'սկսենք խորհիլ . այլ պէտք եղածն ալ կը
գործադրենք :

Ուստի թէպէս եւ դուք զանք որչափ ալ
բուն Լուսաւորչի չաղին հետեւող անուա-
նէք եւ դրոթիւններդ մինչեւ Լուսաւորչի
ժամանակը հին ցուցնէք , մինչդեռ մեք ալ
նոյն չաղին հետեւող եւ Լուսաւորչի դը-
րութեան յար եւ նմանը կրտէք զանք ,
եւ երկու մասերս ալ ինքզինքնիս Հայաս-
տաննայց եկեղեցոյ զուակ կանուանենք ,
կաթողիկէ բառով այս մասերը չենք կըր-
նար հասկցնել . քանզի երկուքնիս ալ կա-
թողիկէ ենք կրտէք , հոգիմշական բառով
դարձեալ չենք կրտէք հասկցնել քանզի բուն
բառը չէ եւ դուք հոգիմշակցի չեք ինչպէս
որ Լուսաւորչի չէք , եւ Լուսաւորչի հիմ-
նած եկեղեցին , հիները երբէք հոգիմշական
եկեղեցի կոչուած չէ , լատինական բառը
գործածելով դարձեալ չենք կրտէք հասկը-
նել , քանզի եկեղեցիներդ լատինացեալ չէ .

իսկ պապական բառը՝ որ Պապին գերազա-
նութեան կողմնակից խումբը կը նշանակէ ,
եւ դուք ալ այդ պատճառաւ մերնէ բաժ-
նուեցաք , բուն եւ յարմար բառն է : Բայց
պապական բառը կրտէք թէ նախատական
բառ մ'է , այդ չ'ընդունիր , քանզի Պա-
պին գերազանցութեան կողմնակից ըլլալը ,
եթէ նախատական վիճակի մը մէջ գտնուի
է , այն ատեն այդ բառն ալ նախատական
եղած կըլլայ :

Պապական բառը բողոքականը հնարած են
եղիր . առկից մեզ ինչ կայ , մեզք ձեր եւ
անոնց ճիւղը , եթէ ամեն օր ամեն թիւրթիւր
նուս մէջ դործածած լսուեցին , այս բո-
ղոքականի հնարք է , միւսը անաստուածի ,
հերետիկոսի , մահմետականի , կրակապաշ-
տի եւն . ըսելով չի գործածենք , այն ատեն
բառական էնքիցիսիս մը բանալու , ուղղա-
վառներէ հնարած բառերը ընդունելու ,
ու միւսները պարունակող բաւարանները
ու գիրքերը վառելու ենք :

Այս տեղ կը վերջանայ Մէծնաւի հետ
ունեցած հաշիւնիս , բայց դարձեալ մեր աղ-
գայնոց այն մասը , որ կ'ըմբռնուեցինք քա-
ղաքական պահանջներովն կը յուսան , կը
հրաւիրենք որ ուղղութեամբ կարգանան Մէծ-
նաւի այն աղբիւրը « Եւրոպայէ ելլելէ առաջ չ'ը-
լլալ » : Անոնք Քրիստոսի
տեսնելի փոխանորդ եւ անսխալ կոչած Պա-
պիւններն պահանջուեցին չեն սիրել . մեք
ասդին ոչ միայն սիրելու , այլ անոր գիրկը
նետուելու ելիր ենք . անոնք սոսկ քաղա-
քական ինքզինքնու մէջ՝ լուսաւորութեան
եւ յաւատարմութեան քաղաքներն անվել
Պապին կողմն դրուած քաղաքը ժողովել կը
ձանձրանան ու կը հոգնին , մեք մեր ա-
զատ կամքով մեր քաղաքներն առջեւ « հը-
րամիշ չաք քաղաք » ըսել կուզենք , ա-
նոնք այս ծանր լուծին տակէն ազատելու
համար բոլոր ճիգերնիս կը թափեն , իզական
եղան ձեռքերնիս լսել կուզեն , դատարա-
կութիւնը կ'ընդհատակեն , նոյնքններու կո
մասունքն , մեք « հրամայեց ձեզ անարար
դաշտեր ունենք պահած , եկեք ձեր փուշ
ու տատակը սերմանեցէք » կ'ըսենք , վեր-
ջապէս ինչէ որ անոնք ազատիլ կուզեն , մեք
ինքզինքնիս այդ անել գուցին մէջ կը նե-
տենք :

Գոյիք ենք ականջնիս մեր (գոստափառ
կայսեր ամեն օր թէ բերնանց եւ թէ գը-
րով խոստացած կրտական հաւատարմութեան
ձայներուն , եւ դայեր պապական որսորդ-
ներուն բերանն 'ի վր կը նային) :

Ձգիր ենք (ստանեան կառավարութեան
օրինաց տրամադրութեամբ մեզ եւ բոլոր
հպատակաց սուսած հաւատարմ երկրացիու-
թեան իրաւունքը մէկ դի , եւ դայեր անդին
այլակրօններուն դէմերը , ճառ կ'ընեն , չը-
նորհէ քու պաշտպանութիւնդ՝ ըսելով ար-
դարութիւն կը մտնանք :

Կուրցէր ենք ամեն օր անվեհեր եւ ճա-
կատք բաց կրպով դատարներն վատկող ան-
ձեր տեսնելու , եւ դայեր անդին փուշ
ու խարտակի մարդոց ապաստանել կուզենք
որ՝ մեր դատերը վատկոյնն ու մեր ձեռ-
քէն բռնելով իրաւունքնիս գործադիր տան
Անա Ձէյթունի իշխանները , որ պապա-
կան ըլլալով՝ դատ վատկել կերպէին ,
բայց լուսաւորչական միջեւ որ չեղան , դա-
տներն կարգի չի դրուեցաւ . ինչպէս նաեւ
կը լսեմք թէ՛՝ այս անգամ նոյն իշխանաց
Պոլիս գաղտնի առարկալ եղող տուրքի խըն-
դիրն ալ՝ Ձէյթունցոյ ուղածին պէտ կարգի
դրուելէն զատ՝ չ'ընենք անվել ալ պատուաւ ել
նին որդուած է

Անա Չարանձախի խնդիրը որ՝ ոչ թէ
կրտականութեամբ կարգի դրուեցաւ կամ
կարգի կրտար դրուել , այլ միմիայն անընդ-
հատ աշխատութեամբ կարգի դրուեցաւ ,
քիչ օրէն Մուշ ալ որ՝ այսօր կը հեծէ Քըր-
թիւնը քաղաքական տակ , վաղը ան-
պատճառ պիտի բարկկարգուի :

Անա Հինձիլ խնդիրն ալ որոյ մէջ Լեդե-
նագործը չի կրցաւ պապական վարդապետ
մ'ըլլալուն համար արգարանալ , եւ եղեւ
մարդուն ձեռքն ու բերդաբերութեան վը-
ճիւղը ստացան , թէ եւ Լեդնի , հիմա պատի-
ժը թեթեւեղ է . բայց այդ պատժով թե-
թեւութիւնը աւելի պապական կղերին ե-
ղեղանգործութիւնը կը քաջալերէ , քան թէ
մեզ մեա մը կուտայ , որու հետեւանք ,
հարկաւ ընդհանուր կղերականութեան աչ-
քէ ինչպէս :

Ի՞նչ ասոնք ըսելով չենք ըսել որ՝ պա-
պականութեան համոզեանները պապական
չըլլան , եթեմա բարով մանաւանդ մեր այն
եկեղեցականները որ՝ հարիւրին 75 պապա-
կանութեան համոզեալ են , բայց լուսաւոր-
չականութեան չ'ընտանիս տակ կը գործեն

այլ անոնք որ՝ ըսողութեան պաշտպանու-
թեան համար կրտական փոխալու կը ձեռնոր-
կեն , շատ եւ շատ կը սխալին :

0

ՄԵՃՅՈՑ ՎՐԱՅ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Մարտի 918 ԲՅՈՒՆԻՆԻՆԻ ԳԵՂԵՒԷ

Արեւելեան կողմէն Գրգուռ լեռը կոթո-
ղածն անկուած կ'երեւի , որոյ ստորոտը
տարածուած է մէկ կողմը Մշոյ դաշտը ,
միւս կողմը Վանայ ծովը . առաւ օտեան ա-
րեգակը երբ նոր կը ծագէ , իր ճառագայթ-
ները զարնելով ծովուն ալեկս եւ դաշտի
դոճիկնայց վրայ , կանաչ կարմիր պսակ մը
մանեկածն կը ձգէ այս Գրգուռայ կլորակ
եւ լեռի գլխին , կը զմայլի անոր նայողը ,
Գրգուռայ թիկնայց 'ի վեր կ'արծառնայ
Նեմլուէ կամ Ներթուլ լեռը , որոյ գլուխը
նման է բոլորակ սեղանի մը , մէջ տեղը հը-
րարուղիի մարմնով . եւ անոր շուրջը պը-
սակածն շարուած աղբիւրները բարեհամ ,
եւ ծաղկունք անուշահոտ , կարծես այս աղ-
բիւրները իրեն դովադոյցի բաժակ զըր-
ուած են այս բնութեան քանդակի սեղանին
շուրջը , որոյ շրջը ժողովելով մէկտեղ ա-
ւագան մը կը կապեն Ներթուլայ գլխու
սկաւառակին մէջ եւ անկէ ինչպիսի ինչ-
պէս կ'աւանդեն տեղայիք , Մեղրագետը կը
բխէ իր ոտքին տակէն , Այս Ներթուլ լե-
ռը իր ճակատին կրտած ունի լեւայ դիա-
կը 'ի տեղի կանանց եւ որդեոց եւ 'ի նշան
յաղթանակի մեր Հայկին առաջին հայուն ,
առաջին յաղթողին ազատութեան թշնա-
մոյն : Այս այս տեղին բոտ ամենայն հաւա-
նակութեան գերեզման Ռեւայ , որոյ վրայ
երկար խօսելու ժամանակ չէ այժմ : Մշոյ
դաշտի միւս կողմ լեռներու վրայ բարձ-
րացած են գլխաւորապէս վանքերը , սուրբ Ա-
ռաքիւրց վանք , սուրբ Յովնանու վանք ,
եւ սուրբ Կարապետին , որոց ամպամած եւ
արեւով ոսկեղոծուած կաթողիկէից իաչե-
րը ամէն կողմէն հովանի կը փոխեն դաշտի
գեղերու վրայ նայելով , եւ ամէն սիրտերը
իրենց կը քաշեն : Բայց արդի Մշեցի Հայն
ամենեւին բան մը չ'զգար , եւ զգալու եւ
իմանալու աչքով չի նայիր անոնց վրայ . բո-
լորովին ինքզինքը օտար երկրացի ցոյց կու-
տայ , եւ եթէ ճշմարիտ պէտք է ստել , իր-
ուս օտար ազգ մը կ'երեւի , եթէ կարդալով
չ'գիտէ իր նախկին հայրենեաց եւ պապե-
րաց պատմութիւնը , գոնէ աւանդութիւնն
այ խիստ քիչ ունի իր մէջ : Քիչ կը զըտ-
նուի իրենց բերանը հայերէն հին երգեր եւ
վէպեր , որոյմէ մարդ կրտայ լոյս առնուլ ,
այլ առ հասարակ իրենց խաղեր եւ երգե-
րքերէն իրենցին , թէ քաջաց ու քաջու-
թեան պատմութիւն մը կայ . բոտ մեծի մա-
սին Քրտիւրու վրայ է , նոյնպէս մասայներ ,
հարսնեաց ու մեծիւրց ողբերը առ հասա-
րակ լո՞ւ լո՞ւ լո՞ւ են , թէ եւ ազգային ալ
կը գտնուի , բայց խիստ քիչ , իրենց անուն-
ներու մէջ ազգային կամ զաւառական սեպհա-
կան անունները չ'կան գրեթէ ոչ Մուշեղ
ոչ Մամիկոն . ոչ Վահան . ոչ Վարդ . եւ այլ
այսպիսիք որ Մամիկոնեաց տոհմական ա-
նուն են : Վարդանը կայ բաւական , եւ զայն
կրճատելով՝ Վրդո կը կանչեն . ինչպէս բո-
լոր միւս անուններն ալ , զորօրինակ . Պետ-
րոս՝ Պէտո . Ղուկաս՝ Ղուկէ . Աւետիք՝
Ավէ . Ոհանէս՝ Օհնէ . Վարդի՝ Մկրէ , կամ
Միւս . Կարապետ՝ Արպէ . Գրիգոր՝ Գրգո .
Կիրակոս՝ Կիլի . Հայրապետը՝ Հէպո . եւնի
կանանց ցեղի անուններն ալ Հայերէն քիչը
կան , դորօրինակ . Ծուշան . Ծողեր . Մարի-
ամ . Աննա . Եղա . Ըստ մեծի մասին Քրտե-
րէն են . դորօրինակ . Գուլէ . Չին . Գօղալ-
Խըղալ . Յըտո . Փամպօ — եւնի Էրիկ մարդոց
մէջն ալ Քրտու անուն կրող շատեր կան .
դորօրինակ . Ատո . Աստո . Եստո . Հասո .
Քօջօ . Կէնչօ . Ռէջօ . Տըջօ . Փօտօ . եւնի .

Մշեցի հայոց համար խօսելու , խորհն-
լու , վիճելու , երգելու , բամբասելու , դա-
տելու , դու ասա նաեւ ուտելու , կուրե-
նուր . եթէ ազգային առարկայ մի կայ , այն
սուրբ Կարապետ վանքն է միայն . եւ եթէ
կարելի է սակ , սուրբ Կարապետը Մշոյ աշ-
խա՛հի Աստուածն է . իրենց երգումը սուրբ
Կարապետն է , հիւանդան , նեղութեան
մէջ ինչպէս , սուրբ Կարապետ կը կանչեն .
խրախոյս՝ անոր անունով կը բառան . վը-
տանք մը կամ յաղթանակ մը ունենան սուրբ
Կարապետ կը կանչեն . եւ այս թէ Հայ թէ
Քիւրդ , եթէ քիչ մը երկար եղաւ գրու-
թեան այս մասը , թող ներեն ընթերցողը
գրեցի , որպէս զի հասկանալ թէ ինչպէս
Հայ պէտք է լինի Մշեցի Հայն , որ քարշիկ
եւ ոչինչ Քիւրդ մը քիչ օտար կը համարձակի

մտնել եկեղեցին , Ջատիկ օրը , սուրբ պա-
տարադի ժամանակը , իւր քահանայի ձեռքէն
Քրիստոսի տնաւոր մարմինը եւ տանի ձգէ
աղբիւր մէջ . ապա հանէ շան պոչը կա-
պէ ու գեղին մէջը պտտոյնէ . գեղի մը ամ-
բող ժողովուրդ իր քահանայով մէկ տեղ
պող աչքով պաղ օրտով հանգիստեա կա-
նի եւ յանձն չ'առնու մեռելի իր կրօնքին
համար , իր Աստուծոյն համար , իր Փրկչին
համար . եւ նոյն երկրի բոլոր հայերը , եկե-
ղեցականաց եւ աշխարհականաց համար առ
հասարակ կրտւմ , օրհնաւոր բողոք մը , ասա-
տիկ յուղմունք մը չեն յարուցանիր Քրտե-
րու դէմ . թող իրենց մարմինն ու արիւնն
ալ թաւալէր աղբիւրներու մէջ խառնուե-
լով Քրիստոսի մարմնոյ եւ արեան հետ . կա՛մ
այն ժամանակ կը վերջանար Հայն Մուշէն ,
կամ իսպառ կ'աղատուէր Քիւրդէն :

Թէ ի՞նչպէս Հայ պէտք է լինէր Մշեցի
Հայն . երբ իր աչքով տեսնալով եկեղեցեաց
կողոպտուելը , վանօրէից թալուրիւր , իր
վարդապետին մահացու հարուածով զարնու-
լը ու չենէր տէրտէրն իր փրկումով , վարդա-
պետն իր վերջալով , եւ ամէն երես իաչ հա-
նող անհաց , անջուր , անքուն մնալով ,
մոռնար իր առուտունը , իր վարն ու վա-
տակը , գլխիդ ատնանք . չորս կողմը լե-
ցնէր իր բողոքալիւրներով , շարժէր կառաւա-
րութիւնը իրաւացի աղաղակներով ,
զարթոյնանալով անոր դուրս իրենց վրայ
եւ ցատումն այն եղեւնագործաց վրայ :

Եթէ Մշեցի Հայը մեր բոս՝ ճշմարիտ
Հայն լինէր , երբ իր ականջով իր խաչն ու
հաւատը հայտնի լսէր , երբ իր եկեղեցեաց
մէջ պղծութիւն տեսնէր , կը իր մեռնուն
ու Աւետարանը թափած եւ ոտքի տակ թ-
նած կոխկոտիլը տեսնէր , պէտք էր նա-
հատակութեան հանդէսն ելնէր . ո՞վ կրտէ
թէ ասոնք եւ մեք առ հասարակ Մշեցի
վարդապետն է իւր դարու Հայոց սերուն-
դին ենք . . . Երբ լաւ համարէին զմահ
անձանց , քան տեսնել զաւեր եկեղեցեաց
եւ լսել նախատին հաւատոց իրենցն ,
Ո՞վ կրտէ թէ ասոնք այն Մշեցեոց սերուն-
դն են . որք՝ ինչպէս պատմութիւն կը ցու-
ցնէ , իրաքանչիւր դարու մէջ միշտ ե-
րեւելի առաքելիք , եւ միշտ առաջին պը-
սակն ընդունող եղեր են , մանաւանդ կրօ-
նական մարտիրոսութեանց մէջ :

Մշեցի հայն եթէ Հայ լինէր եւ մարդ ,
ինչու՞ պիտի ստացուածք , իր տունը եւ
կալուածը , իր կինն եւ զաւակը , իր գոյքը
եւ կեանքն , թողուր նուաճուել Քրտերու եւ
զէչ մարդերու անիրաւ ձեռաց ու կամաց
ներքեւ , նաեւ մինչեւ անգամ իր հոգին ալ
վերջին սարկութեամբ եւ վատութեամբ թո-
ղու որ բռնաբարեն , ծառայելն են նախա-
տեն . սոքա կարծես ոչ բանականութեան մէջ
խորհուրդ , ոչ քաղաքականութեան մէջ պա-
տիւ , ոչ բարոյականութեան մէջ չորհրդ ,
ոչ հաւատալեաց մէջ Աստուծոյն սիրող
բորբոքումն , ոչ կենցաղավարութեան մէջ
ճաշակ , եւ ոչ հոգեոյ ու կամքին մէջ ազա-
տականութիւն ունին , ինչպէս իրենց արդի
անտարբեր վիճակը կապաղեցանէ , ապա
թէ ոչ գոնէ իրենց ընտանեկան՝ բարոյա-
կան եւ կրօնական պատիւը պաշտպանելու
համար բողոքել , խնդրել եւ տէրութեան
պատժական օրէնքին տրամադրութեանն ա-
զատ մնալու կերպով մանր աչք առնել եւ
չը թողուլ թշնամոյն ու զաւան ընելու , այն
ինչ կը մեռնին եւ կապանուին ամէն ժամա-
նակ շատերը . բայց զուր տեղ ոչ իրենց
կեանքը նշանաւոր լինելով , եւ ոչ իրենց
մանր պատուաւոր ու արդեւաւոր , Ափսոս
չէ՛՝ մեր մարդկութեանը , որ աստուածային
եւ մարդկային պարտականութեամբ միմիայն
մեզ բարեխնամիչ տէրութեան պէտք է հը-
պատակեցնենք , կը հպատակեցնենք ծան-
դայն անարժան անձանց . այս եւ շատ ան-
գամ ալ մեք մեզնի հրաւիրելով եւ մեծա-
ցնելով զանոնք , որ տէր են մեզ :

Մշեցի Հայը պէտք էր գիտնար թէ Մես-
րոբայ խորհեացոյն , անյայտ Դաւթին , եւ
ասոնց նման շատ մը աղկիւս հոգեոյն եւ մտաց
լուսաւորչի հայերը ունեցել իր հայրենեաց
արգանդէն ծնած՝ մեռած՝ եւ զարգացած այն
արեւով ու աստղերով , այն հողով ու ջրով ,
որոնցով այսօր ինքն կը մնան . բայց ա-
նոնց քրտանց եւ շնորհաց կաթիլն անգամ
այսօր իր մէջը չունի , ոչ ուսումնարան եւ
ոչ ուսումնասիրութիւն , ոչ եկեղեցոյ շուք
ու պայծառութիւն , եւ ոչ ազգասիրութեան
եւեմը , ոչ վարդապետով՝ վարդապետ է ,
ոչ անդրաբն՝ տէրտէր , եւ ոչ ժողովուրդը՝
ժողովուրդ : Ա՛հ եկեղեցի եւ ուսումնարան ,
միմիայն տեղի եւ տաճար ազգայնութեան
պահպանող անուան պահուր , եւ ազգի հո-
գեկան կեանքը վերականգնանալու միմի-
այն միջոց : Այս մեր աղոթալու թեան դը-
րոշմը եկեղեցին է միայն եւ ուսումնարան ,
որեմն եկեղեցականներ եւ ուսումնական
ներեն մեր իրաւանց դրօշակիրները Մշեցեոց
տղային եւ կրօնական կենաց չափն ու սահ-
մանը հասկընալու համար , իր մէջի եկեղե-
ցական եւ ուսումնականը — եթէ կարելի է
զանոնք այսպէս անուանել — կրտան յայտնել
անտարակապ ժողովուրդներն մը յառաջադի-
մութիւն ու լեռնադիմութիւնը իր մեծ պաշ-

